

մանակի մը նուիրուած է, քայց, իրաւի, «Էջմիածնի» պատերէն դուրս չ'ենլեր:

Աւելի նորերէն՝ Տ. Գիւտ Քահանայի «Դիւան»-ները արժէքաւոր են, իբր ընտիր մթերք պատմական հում նիւթերու:

Այդ ժամանակներուն մէջ, մեր Եկեղեցին զբաղեցընող մեծ ինդիքներ ծագեցան: Մայր-Աթոռը՝ ընդ լայն եւ ընդ երկայն շշաւակ ըլլալէ ետքը՝ քաղաքական այլ եւ այլ փոփոխութիւններու հետեւանքին, ոռւս գեր-իշխանութեան տակ՝ ինքն իր մէջ ամփոփուեցաւ: Իր՝ Էջմիածնի՝ նուիրակները, որոնք մեծ դեր կը խաղային Պոլիս եւ զաւառները, իրենց երկարամեայ պաշտօնավարութեան միջոցին, իբր ներկայացուցիչները Ամենայն Հայոց Կաթողիկոսին, դադրեցան ալ: Կ.Պոլսի Պատրիարքութեան դիրքը ամրացաւ, կանոնաւորուեցաւ եւ Պատրիարքը, միանգամայն իբր Փոխանորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ընդարձակեց իր իշխանութիւնը բովանդակ Թուրքիոյ Հայոց եկեղեցիներուն վրայ եւ նուիրակային դրութիւնը բոլորովին եղանակաւորուեցաւ, երբ նոր նոր կազմակերպութիւններով Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնը ուղղակի իրեն կապեց Թուրքիոյ առաջնորդական վիճակները (Հմմտ. էջ 84—86):

Սիս եւ Աթամար, մանաւանդ առաջինը, իր իրաւասական ընդարձակ սահմաններուն մէջ, աւելի շինիչ յարաբերութիւններով կապուեցաւ Կ.Պոլսի Աթոռին:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը՝ իր արդի կազմակերպութիւնը եւ ինքնակառավարութիւնը շատո՞նց կորսնցուցած պիտի ըլլար, եթէ ԺԸ դարուն, Կոլոտ Պատրիարքը, Նրբին հեռատեսութեամբ, Պոլսոյ Աթոռէն զատելով զայն, ի գլուխ չ'անէր Ս. Յակոբայ Աթոռին քարեկարգութիւնը՝ Շղթայակիր Գրիգոր Պատրիարքի հետ:

Այն դարուն մէջ է որ՝ Սեբաստացի Մխիթար Վարդապետ, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ երբեմնի քարոզիչը (1697 եւ 1700) հիմնեց Մխիթարեան Միաբանութիւնը, Վենետիկի Ս. Ղազար կղզեակին մէջ:

Այն երկար ջանքերը, զոր ոռնիթօններ թափեցին Հայ. Եկեղեցւոյ շուրջը՝ դարեր յառաջ, վերջապէս արդիւնաւորեցան, «Կաթողիկ Միդիթի» պաշտօնական